

ՆԱՐԵԿԱՑՈՒ «ՏԱՂ ՅԱՐՈՒԹԵԱՆ» ԵՐԿԻ ԲԱՌԱՊԱՇԱՐԻ  
ՄԻ ՔԱՆԻ ԲԱՌԻ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆ

*Բանայի բառեր՝ Նարեկացի, տաղ, գանձ, ստուգաբանություն*

1. Գրիգոր Նարեկացու երկերը նմուշ են հին գրականից միջին գրականի անցման հայերենի՝ իր ժամանակի լեզվի յուրօրինակ արտահայտություն՝ անկախ ներքին (գրական-ոչ գրական և այլն) տարբերակվածությունից: Իբրև տիպական օրինակի՝ ստորև անդրադառնում ենք «Տաղ Յարութեան» երկի լեզվին: Իսկ մինչ այդ նշենք մի քանի հանգամանքներ:

Մաշտոցի անվան Մատենադարանի հմուտ աշխատակից Ա. Քյոշկերյանի՝ երկար տարիների անդուլ աշխատանքի շնորհիվ տասնամյակներ առաջ կազմվել է Գրիգոր վարդապետի տաղերի և գանձերի քննական բնագիրը, որ լույս է տեսել աշխատասիրողի ընդարձակ ներածությամբ, բնագրային ծանոթագրություններով, օգտագործված աղբյուրների համադրությամբ ու նկարագրությամբ, ձեռագրերի, տպագիր գրականության և հատուկ անունների ցանկերով<sup>1</sup>:

Դասական բանասիրության մեջ ընդունված է եղել քննության առարկա դիտել այդ և մյուս երկերը ամենից առաջ իբրև ժամանակի գրական-կանոնական լեզվի՝ ուշ շրջանի հայերենի (գրաբարի) լավագույն նմուշներ, իսկ ոչ գրական (խոսակցական, նույնիսկ բարբառային) բառեր, քերականական ձևեր, ոճեր և այլն գրեթե դուրս են մնացել կամ ստացել են այլ բնորոշում:

Այնինչ «Տաղեր և գանձեր» ժողովածուի բառապաշարի (ընդհանուր առմամբ՝ լեզվի) ավելի մանրամասն քննությունը ցույց է տալիս, որ այն ընդգրկում է ոչ միայն գրական-կանոնական, այլև ժամանակի խոսակցական (sic բարբառային) բառեր, քերականական ձևեր, «ոճեր», որոնք մնում են ոչ լիովին պարզաբանված:

Երկինք ու գետին («երկիր») քննող վարդապետը հայորդի է, նրա մարդկային (իմա՝ «գերմարդկային») քննությունը («խոսքը») իր ժամանակի հայերենով է՝ ըստ ամենայնի, *խորությամբ* (իմաստով), *ձևով* (գրական, ժողովրդական-խոսակցական, նույնիսկ՝ բարբառային), *ընդգրկումով* (աստվածախոսական, փառաբանական՝ փիլիսոփայական), *սրբասացությամբ* (եկեղեցական): Նրա երկերին ամենից առաջ անդրադարձել են վերը նշված

<sup>1</sup> Գրիգոր Նարեկացի, Տաղեր և գանձեր, աշխատասիրությամբ Ա. Քյոշկերյանի, Ե., ՀՄՍՀ ԳԱ հրատ., 1981:

հատկանիշներով (Հ. Գ. Ավետիքյան, Մ. արք. Օրմանյան, Մ. Աբեղյան և ուրիշներ), դրանք եղել են նաև լեզվական-բառային քննության առարկա ընդհուպ մինչև մեր օրերը<sup>2</sup>:

Նարեկացու տաղերի լեզուն, կարծում ենք, պիտի քննվի ոչ միայն հին գրական հայերենի (գրաբարի), այլև ժամանակի խոսակցական (եթե ոչ նաև բարբառային) կտրվածքի մեջ: Նա պատմական Վասպուրականի տարածքի ծնունդ է, և չի բացառվում, որ 10-րդ դ. երկրորդ կեսի և հետագա ժամանակի լեզվի բանավոր (խոսակցական կամ բարբառային) տարբերակի տարբեր թափանցեին նրա «մաքուր» գրաբարի մեջ, մանավանդ բառերի և ձևերի արտասանական-հնչական տարբերությամբ:

Ազգային հանճարի տաղերի մեջ՝ գրավոր խոսքում, մենք գտնում ենք նման երանգներ, որ նախորդ ուսումնասիրողները չեն նկատել կամ չեն համարել այդպիսին՝ թերևս գրաբարյանի պարփակումով:

Ինչպես գիտենք, Նարեկացին ապրել է միջին հայերենի շրջանին նախորդող ժամանակում, և այդ շրջանը հետագայում պիտի սահմանվեր որպես գրական լեզվի նոր որակի դրսևորում: Իսկ ինչպիսի՞ հնչյունական, ամենից առաջ բաղաձայնական համակարգ ունեւր այդ ժամանակի հայերենը, ինչպիսի՞ն էր վերջինիս բառապաշարը, քերականական կառուցվածքը, որոնցով միջին գրականը տարբեր է լինում հին գրականից: Այս հարցերի նկատառումով, անշուշտ, կարելի է հասկանալ Նարեկացու տաղերում մեզ հետաքրքրող մի քանի բառի նոր մեկնաբանությունը՝ իբրև քննական վերլուծություն կամ ստուգաբանություն:

Մեր այս հոդվածում անդրադառնում ենք միայն «Տաղ Յարութեան» երկում գործածված նախ՝ ոչ գրական (բանավոր-խոսակցական, բարբառային) բառերին և քերականական ձևերին, գրական նորակազմություններին, այնուհետև՝ *գանձ, գիլ, տաղ* բառերի ստուգաբանությանը:

**2. Գրական նորմայից շեղվող՝ խոսակցական (բարբառային) բառերի և ձևերի գործածություն:**

ա) Չայնավոր հնչյունի սդում (որ հաճախ դիտվում է գրական նորմայի մեջ. *ի լեռնէ(ն)* (փխ. *ի լեառնէ*. հմմտ. ՆՀԲ, էջ 881). «Սայլն այն իջանէր *ի լեռնէն Մասեաց*» (էջ 59): Նման երևույթ նկատվում էր դեռևս հին գրականում, որն առանձին քննության առարկա է:

բ) Հպական կամ հպաշփական ձայնեղ բաղաձայնի դիմաց խուլի գործածություն (*գ > կ, ջ > ձ*). *կորնկան* (փխ. *կորնգան*) «վարդագույն թիթեռնա-

<sup>2</sup> Հմմտ. «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», հհ. 1-2, Վենետիկ, 1836-1837 (այսուհետև՝ ՆՀԲ): Վ. Դ. Մոսաբեյյան, Գրիգոր Նարեկացու լեզուն և ոճը, Ե., ՀՄՍՀ ԳԱ հրատ., 1971: Հետագա ուսումնասիրություններին (հոդվածներ, զեկուցումներ և այլն) այստեղ չենք անդրադառնում:

ծաղկավոր մշակաբույս»։ «Եթե հարիւր բարդ խոլրձան, վեց *կորնկան...*» (էջ 61), «Եւ այն վեց բարդ *կորնկանն՝* // Վեցարեայ գործքն Սստուծոյ» (էջ 64), *ճոճ* (փխ. *ջոջ*) «խոշոր. մեծ, մեծկեկ»։ «Այն ճորտն *ճոճ* էր եւ ճապուկ» (էջ 62)<sup>3</sup>։

Այդպէս ունենք նաև *ղ > տ* անցման օրինակ՝ \**ղայլ* «ձայն (թռչնի)» > *տաղ* «երգեցիկ ձայն. մեղեդի», հետևյալ մեկնություն-ստուգաբանությամբ։ Նախ՝ հայտնի է, որ միջին հայերենի Կիլիկիայի տարբերակում «*այ* երկբարբառը վերածվում է հիմնականում *ա* ձայնավորի»<sup>4</sup>։ Այնուհետև, հայագիտության մեջ կա կարծիք, որ «կիլիկյան հայերենը նորագույն փոխառությունների ձայնեղները տառադարձում է խուլերով... օր. արաբ. *burī* > պուրճ»<sup>5</sup>։ Այդ երևույթը նկատվում է նաև Վասպուրականի տարածքում, որում ևս ձայնեղ բաղաձայններն արտասանվում էին խուլ (*բ > պ, ղ > տ, գ > կ* և այլն)<sup>6</sup>։ Ըստ այսմ, հայ. *տաղ* բառը կարող է գուցորդվել *ղայլ*- (< *ղայլայլ* < \**ղայլ-ղայլ*) առանձին չգործածվող արմատի հետ՝ երկբարբառի պարզեցմամբ (*այ /ա*), որ տարածված է հայերենում՝ առհասարակ, այլև ձայնեղի խլացմամբ (ունենում ենք արմատի տարբերակներ՝ *ղայլ* - / *տաղ*, ընդհանուր իմաստով՝ «ձայն. հնչում»)։ օր.՝ «*Տաղ* Յարութեան, Գրիգորի Նարեկացոյն ասացեալ» (էջ 59)<sup>7</sup>։

զ) Փոքրացուցիչ-փաղաքշական *-իկ, -ակ* (դրանք տարբերակներ են) մասնիկներով կազմություններ՝ *սայլիկ, աթոռակ*. «*Չսայլիկն* ածեալ են, կացուցեալ. // Ի Մասեաց կողմանէն // *Չսայլիկն* ածեալ են, կացուցեալ» (էջ 60-61). «Եւ ահա չչարժէր *սայլիկն* այն» (ն. տ.). «Նա ձայն ածէր եզնամոլին, // Կանչին առնէր *աթոռակին*, // Դարձեալ խաղայր եզնամոլին, // Խաղայր, ցնծայր *աթոռակին*» (էջ 63).

դ) Խոսակցական տարբերակին բնորոշ բառեր<sup>8</sup>. *խոլրձան* (*խոլորձն*), *կորնկան* (*կ-ով*), *փնջեալ* (*ծաղիկ*). *եզնամոլ, կանչին* (հմմտ. *կանչ-, գանչին, գոչին*), *խաղալ* (փխ. *երթալ, գնալ* և այլն. հմմտ. արդի խոսակցական՝ *աչքը խաղում է*).

ե) Հոգնակիի կազմություն՝ հավաքական մասնիկների, այլև հետագայում լայն տարածում գտած և հին գրականի *ք-ի* հետ *ոտի* մասնիկի, այլև *ք-ի* ն

<sup>3</sup> Հ. Գալստյան, Երեք բառ Նարեկացու տաղում // «Գրական թերթ», 2015, 4 (3237), էջ 3 և 7։

<sup>4</sup> Տե՛ս Մ. Հ. Մուրադյան, Գրական միջին հայերենի տերիտորիալ տարբերակների հարցի շուրջը (XII-XIV դարեր) // «Լեզվի և ոճի հարցեր», III, Ե., 1975, էջ 227։

<sup>5</sup> Մ. Հ. Մուրադյան, նշվ. աշխ., էջ 225։

<sup>6</sup> Տե՛ս Մ. Մ. Միքայելյան, Վասպուրականի խոսվածքների քմային ձայնավորները (համաժամանակյա և տարաժամանակյա քննություն), Ե., «Նաիրի» հրատ., 2009։

<sup>7</sup> Ընդունված է նման բառերը (արմատները) համարել բնաձայնություն (հմմտ. նաև *ծլվլալ* կրկնավոր հիմքով կազմությունը)։

<sup>8</sup> ՆՀԲ-ն Նարեկացու տաղերը բնորոշում է հետևյալ կերպ՝ «Տաղք սրբոյս խրթին բառիւք ճարտար քերթութեան» (նույն տեղում, հ. 1, էջ 16, 1-ին սյունակ, ն. 2)։

փոխարինած *-եր, -ան, -ական* մասնիկների գործածություն. վերջիններս գրաբարի բնագրերում երբեմն հանդես էին գալիս իբրև հավաքական-հոգնակերտ մասնիկներ, որոնցից հատկապես *-եր* (< *-եար*) մասնիկն ընդհանրացել է գրական աշխարհաբարում. *սամոտիք, փոկեր(ն)*. «Եթե սամիքն են արծաթի, լուծն է ոսկի, // Եւ *սամոտիքն՝* ապրիշմի, // *Փոկերն՝* ի կերպասոյ հիւսեալ...» (էջ 62):

ՆՇԲ-ն *խոլորձ* բուսանունը նշում է երկու ձևով՝ առանց *ն-ի* և *ն-ով* (*խոլորձն*), և վերջինի համար իբրև սեռական հոլովի ձև նշում է *խոլորձան* (որը, ի դեպ, արտասանությամբ ներդաշն է *կորնկան* բառին՝ *-ան* մասով). եթե *կորնկան* բառի այդ մասը արմատինն է, ապա *խոլորձան-ի* դեպքում այդպես չէ, այն սեռականի ցուցիչ չէ, մանավանդ որ բառը, ըստ ՆՇԲ-ի, հայ մատենագրության մեջ բացի Նարեկացուց հանդիպում է միայն Մխիթար Գոշի առակներում ուղիղ՝ *խոլորձ* ձևով, ուստի *-ան* մասնիկն այստեղ ընդամենը հավաքական-հոգնակերտ է՝ դրված *հարիւր* թվականի քանակի նշման պահանջով՝ խոսակցական մտածողությամբ (այն է՝ *հարիւր բարդ խոլորձան* «հարյուր կապ՝ խուրձ, խորոմ խոլորձ»)։ հմտ. հին գրականում՝ *էշ- իշան* (նաև *իշեան*), *ձի – ձիան*, որոնք խոսակցական ձևեր են եղել, միջին գրականում՝ առավել տարածված:

զ) Ժխտականի ձև *չ-ով*, ոչ թե *ոչ-ով*, *չխաղայր* (փխ. ոչ խաղայր), *չշարժէր* (փխ. ոչ շարժէր). «Եւ ահա *չշարժէր* սայլիկն այն, // Եւ ահա *չխաղայր* անինն այն» (էջ 61, 62. գործածված մի քանի անգամ):

է) Բառային հոմանշություն՝ պատկերի համընդգրկման նպատակով. *ածել / կացուցանել*. «Ածեա՛ լ են, ածեա՛ լ, // Չսայլիկն ածեա՛ լ են, կացուցեալ» (էջ 60)<sup>9</sup>, *շարժել / խաղալ / ցնծալ*. «Եւ ահա *չշարժէր* սայլիկն այն, // Եվ ահա *չխաղայր* անինն այն» (էջ 61 և այլն), «Դարձեալ *խաղայր* եզնամոլին, // *Խաղայր*, ցնծայր աթոռակին, // Եւ ահա *շարժէ՛ր* սայլիկն այն, // Եւ ահա *խաղա՛յր* անինն այն» (էջ 63), *հիւսել / փնջել*. «Փոկերն՝ ի կերպասոյ *հիւսեալ*, // Եւ խարազանն՝ *փնջեալ* ծաղիկ» (էջ 62), *ձայն ածել / կանչիւն առնել*. «Նա *ձայն ածէր* եզնամոլին, // *Կանչիւն առնէր* աթոռակին» (էջ 63):

ը) Որոշյի առաջադաս գործածություն. *վեցթեւեան սերովբէ*. «Եւ յաջմէ նորա *վեցթեւեան սերովբէն*» (էջ 60), *բազմաչեայ քերովբէ*. «Յահեկէ նորա՝ *բազմաչեայ քերովբէն*» (ն. տ.), *աջ կողմն*. «Ի Մասեաց *յաջ կողմանէն*» (էջ 61), *հարիւր բարդ խոլորձան*. «Եթէ *հարիւր բարդ խոլորձան*» (էջ 61, 64), *վեց (բարդ) կորնկան*. «Եթէ *հարիւր բարդ խոլորձան, վեց կորնկան*» (էջ 61, 64), *մին մանուշակ*, նաև *միաւորեալ Երրորդութիւն*. «Եւ այն *մին մանուշակ՝ // Միաւորեալ Երրորդութիւն*» (էջ 64), *չորս գունդ*. «Եւ այն *չորս գունդն* սայլին» (ն. տ.), *հոյլ մարգարիտ*. «Եւ մազն ամէն՝ *հոյլ մարգարիտ*» (էջ 62), *անուշահոտ*

<sup>9</sup> Հմտ. «Երկներ երկին, երկներ երկիր, // Երկներ եւ ծովն ծիրանի» (*Խորենացի*, 1913, էջ 85):

բուրումն. «Այսօր *անուշահոտ բուրմամբ* ընթանայ» (էջ 63), *երկրորդ օրէնք*. «Երկրորդ օրէնքն է Սովսեսի» (ն. տ.), *ամենագոր յարութիւն*. «Փա՛ռք Քրիստոսի *ամենագաւր յարութեան*» (էջ 60, 65):

3. *Գրական կամ խոսակցական բաղադրական հիմքերով նոր կազմութիւնների գործածություն*: Դրանք մի քանի կարգի են՝ իրարից բավականին տարբեր:

ա) Նախ՝ նկատենք, որ այս տաղում կան բառեր, որոնք չկան ՆՀԲ-ում.

*լայնաթիկունք* («թիկունքը լայն. թիկնեղ») «Այն ճորտն ճոճ էր եւ ճապուկ ... // *լայնաթիկունք*, խարտիշագեղ» (էջ 62-63).

*խրձադիզեալ* (< *խրձադիզեմ*. «խրձերով՝ խուրձ-խուրձ դիզել՝ կուտակել»). «Եթէ հարիւր բարդ խուրձան, վեց կորնկան, // Մին մանուշակ *խրձադիզեալ...*» (էջ 61).

*ծաղկախայտուցք* [«գույնզգույն՝ երփներանգ ծաղիկներով ի մի բերված(ներ)՝ կապված(ներ), փնջած(ներ)»]. «Եթէ եզինքն են սաթ ու սպիտակ, // *Ծաղկախայտուցք*, արագաքայլք, ընթացականք» (ն. տ.):

բ) Լեզվի գրական նորմայի մեջ մտնող բառ-բաղադրիչներով կազմություններ, որոնք ՆՀԲ-ում բերվում են կա՛մ հետագա հայտնի հեղինակների անունով (*արագաքայլ*), կա՛մ միայն Նարեկացու այս տաղի վկայակոչումով (*ուռամիջակ*), կա՛մ ժամանակի առումով անհստակ որոշելի ժողովածուների [*Տօնակ*. (= «Տօնանամակ», «Տօնապատճառք», հետագայի), *Ճ. Ա.*, *Ճ. Դ.* (= «Ճառընտիրք ազգի ազգի», թարգմ. Գրիգոր Վակայասերի)] հիման վրա (*եզնամուղ, կանչիւն*):

գ) Գրական նորմայից դուրս (բանավոր-խոսակցական) բառակազմական հիմքով կամ մտածողությամբ կազմություններ.

*եզնամուղ* (ըստ ՆՀԲ-ի՝ «որպէս ամուլք եզանց». իմա՛ն *ամուղ* «գուգակից, լծորդ») ՆՀԲ-ն վկայակոչում է միայն *Տօնակ.*, *Ճ. Ա.* (տե՛ս վերը), որոնց համապատասխան հատվածները եթէ հին չեն, ապա բառը պիտի դիտվի Նարեկացու կողմից կիրառված՝ ժամանակի խոսակցական լեզվի հիմունքով. «Նա ձայն ածէր եզնամուղին» (էջ 63).

*խարտիշագեղ* (ըստ ՆՀԲ-ի՝ «խարտեաշ գունով գեղաւոր». իմա՛ն՝ «շիկավուն գեղեցիկ»). թէն Տաղերի նախօրինակ ձեռագրերի մի զգալի մասը (թվով՝ 10) բառն ունի *ե*-ով, քննական բնագրի կազմողը դնում է *ի*-ով, ՆՀԲ-ն ունի միայն *ե*-ով, և վկայակոչելով միայն՝ *Երզն, քեր*. (= Երզնկացու Մեկնութիւն քերականութեան), *Աղթարք* (= «Անպէտ գրութիւն անպիտան ոճով ի վերայ բախտից...»), ոչ Նարեկացի. «Այն ճորտն ճոճ էր եւ ճապուկ, ...// *Լայնաթիկունք, խարտիշագեղ, ահեղագոչ*» (էջ 62):

*կանչիւն* «կանչ». ՆՀԲ-ն վկայակոչում է նախ՝ *Ճ.Դ* (= տե՛ս վերը), այնուհետև՝ Նարեկացու այս Տաղը. «Նա ձայն ածէր եզնամուղին, // Կանչիւն առնէր աթոռակին» (էջ 63).

*կորնկան* (ըստ ՆՀԲ-ի՝ «խոտ ինչ ցած»։ իմա՝ «վարդագույն թիթեռնածաղկավոր մշակաբույս»), ՆՀԲ-ում գլխաբառը բերվում է *գ*-ով, օրինակները՝ *կ*-ով, տարվում են հնչատարբերակներ՝ *կ*-ով, նշվում, որ բառը *կորնկան* ձևով «ռամկական» է, այլև վկայակոչվում նախ՝ *Մխիթար Գոշ առակ*։ (=Մխիթար Գոշի Առակներ), այնուհետև՝ *Նար.* (=Նարեկացի)՝ այս տաղը («սայլի»)։ «Եթե հարիւր բարդ խոլրձան, վեց կորնկան, // Մին մանուշակ իրձադիզեալ» (էջ 61)։

*ուռամիջակ* (ըստ ՆՀԲ-ի՝ ած. որ բացատրվում է մի քանի կերպ՝ «որոյ ուռքն նմանականք են միջակ. միջասահման ըստ անդամոց ձեռաց և ոտից, կամ պարարակ միջով», որոնցից «մեջքը ուռի պես բարակ ճկուն» իմաստն է բռնում Տաղի բանատողին), և վկայաբերվում է միայն Նարեկացու այս տաղը. այս տաղը («սայլի»)։ «Այն ճորտն ճոճ էր եւ ճապուկ, // Ուռամիջակ, հաստաբազուկ» (էջ 62)։

4. Ստորև, ի վերջո, անդրադառնում ենք *գանձ*, *գիլ*, *տաղ* բառերի ծագմանը (ստուգաբանությանը)։ Նախ՝ նշենք, որ սրանք բառիմաստային (թեմատիկ) տարբեր խմբի բառեր են, *գանձ* և *տաղ* բառերը պատկանում են մեկ առանձին խմբի («արվեստ, մշակույթ»), իսկ *գիլ*-ը՝ մեկ այլ («շարժում. տարածականություն»)։

ա) *Գանձ*։ Այս բառի ծագումը և հայերենում բազմաթիվ տարբերակներ ունենալը (իմա՝ *գինձ*, *սինձ*, *գնձիկ* և այլն) ստուգաբանական մանրամասն քննության ենթարկելը մեզ կարող է շատ հեռուն տանել, սակայն այստեղ դրան անդրադառնում ենք ավելի հակիրճ ձևով՝ մանրամասնը թողնելով մեկ այլ առիթի<sup>10</sup>։ Նշենք միայն, որ բառարմատը (\**qaw-*, նաև \**qh-*, \**uh-* և այլն) թերևս բնիկ է (ունի հնդեվրոպական ծագում), իսկ *-նձ(-իկ)*-ը՝ մասնիկ, գոյականակազմ գործառնությամբ, ընդհանուր արմատն ունի «պտույտ, ոլոր» իմաստը։

բ) *Գիլ*։ «Նոր հայկազյան բառարանը» *գիլ* «քար» (օր. *գլաքար*) և *գիլ* «պտույտ» (օր. *գլորել*) համանուն բառերը դրել է մեկտեղ և երկրորդի համար վկայակոչում է Նարեկացու հիշյալ գործածությունը. «Ի *գիլ* գայր, ի *գիլ*, սայլիկն ի *գիլ*»՝ նշելով՝ «իմա՝ գլելով գլորելով անուոց՝ որպես գեղ գեղ»<sup>11</sup>։

Բառը գտնում ենք նաև Երեմիա Մեղրեցու «Բառգիրք հայոց»-ում՝ գործածված լատինաբան հայերենի բայի կրավորաձև անցյալ անկատարի ձևով՝ *գլեէին* «ծածկեին, յաղթեին»<sup>12</sup>։ Ընդունված է բառի ծագումը բխեցնել հե.\**Eel-*

<sup>10</sup> Հմմտ. *J.-A. Saint-Martin, Mémoires historique et géographique sur l'Arménie*, t. 1, Paris, 1818, p. 150:

<sup>11</sup> *Գ. Աւետիքեան, Իւ. Միւրմէլեան, Մ. Աւզերեան*, Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. 1, Վենետիկ, 1836, էջ 551-552:

<sup>12</sup> «Բառգիրք հայոց», քննական բնագիրը, առաջաբանը և ծանոթագրությունները Հ. Մ. Ամալյանի, Ե., 1975, էջ 67: Տե՛ս Վ. Գ. *Համբարձումյան*, Լատինաբան ձևերի գործածությունը Երեմիա Մեղրեցու «Բառգիրք հայոց»-ում // «Լեզու և լեզվաբանություն», 1-2 (12), 2014, էջ 16-17:

արմատի \*vēlu- (երկար ձայնավորով) տարբերակից, ըստ Գ. Ջահուկյանի՝ հե. \*Ēēl- (կամ \*Ēēlā-) [\*Ēēl(ā)-]. հմմտ. սանս. vālatē «դառնում է», valitā «դարձած, ծռած», valayati «շրջել, գլորել», հուն. ἐλύω «ոլորել, գլորել. գլորվել, փաթաթվել», εἰλόω «գլորել, փաթաթել. շրջապատել» և այլն, լատ. volvo «ոլորել, գլորել. դարձնել», volumen «ոլորք, գալար», գոթ. walwjan «ոլորել, գլորել»<sup>13</sup>:

Ընդ որում, եթե հնդեվրոպական ձայնդարձի տարբեր աստիճանի ձևերի արտացոլումներ են՝

1) *գել-* // *գիլ-* // *գ(ը)լ-ել* «ոլոր (-ուն, -ած, -ել), պիրկ, կլոր» (հմմտ. *գլ-աքար*) (բուն իմաստով),

2) *գալ(-ար, -ած)* (հմմտ. բրբռ.՝ գալած «չորացնելու համար ոլորած՝ հյուսած բանջար՝ ավլուկ և այլն») // *գուլ* (բրբռ.) «պտտ(-ած), բուր, ոչ սուր», այլն «ձվի դեղնուց, խորիզ» // (բրբռ.) *գլուլ, գլգիլ* (նաև *գլուլ-գլուլ* «կաթիլ-կաթիլ»), «(վայրի՝ ոչ մշակովի) ոլոռ» (երկրորդական իմաստով),

3) *գաղ* (*գաղ-գաղ* «անիվ. ժողովելը». տե՛ս վերը՝ «Նոր հայկազյան բառարանի» նշումը) // *գաղ(-ել)* «ծածկել, թաքցնել» // *սայլ*, (բրբռ.) *գ՛ալգ՛ալ-ի* «(երկանիվ) փոխադրամիջոց. սայլ. բրբռ.՝ *գ // ս* հերթագայությամբ (ալտերնացիայով)» (երկրորդական իմաստով), ապա հայերեն հիշյալ տարբերակային ձևերը, իրոք, հանգում են հնդեվրոպական նշված տարբերակային ձևերին՝ ունենալով ընդհանուր \*Ēēl- արմատը (նոր վերականգնում՝ \*k<sup>[h]</sup>el-):

Ուստի, անդրադառնալով *գիլ* (բառ)արմատին, նրան առնչում ենք մի նոր տարբերակ («սայլ. անվավոր փոխադրամիջոց» իմաստով)՝ հայ. (գրական) *սայլ*, և (բրբռ.) *գ՛ալգ՛ալ-ի* բառերը (երկրորդը՝ կրկնավոր բաղադրությամբ, *-ի* կազմիչով), մանավանդ որ *սայլ*-ը գործածվել է Նարեկացու տաղում (ի դեպ՝ այդ տաղը ձեռագրերում կոչվել է նաև սայլի անունով. տես վերը)<sup>14</sup>:

գ) *Տաղ*: Եթե նկատի ենք ունենում միջին հայերենի ոչ միայն Կիլիկիայի տարբերակում, այլև առհասարակ «այ երկբարբառի վերածումը *ա* պարզ ձայնավորի», որ անհերքելի իրողություն է լեզվի պատմության այդ շրջանի

<sup>13</sup> Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 1, Ե., 1971, էջ 530-531: Դ. Բ. Джаукян, Очерки по истории дописьменного периода армянского языка, Ереван, 1967, с. 136: Գ. Բ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Ե., 1987, էջ 155: Ն. Մ. Միսնոնյան, Հնդեվրոպական ձայնդարձի արտացոլումը հին հայերենի բայարմատներում // «Հայագիտական միջազգային երկրորդ համաժողով: Հայագիտությունը և արդի ժամանակաշրջանի մարտահրավերները, 17-19 հոկտեմբերի, 2013 թ., զեկուցումների ժողովածու», Ե., 2014, էջ 320:

<sup>14</sup> Հմմտ. Վ. Գ. Համբարձումյան, Հայերենի բառաբանական և ստուգաբանական ուսումնասիրություններ, Ե., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2012, էջ 143-145: V. G. Hambardzumyan, Armenian and Indo-European: Essays on Comparative Lexicology of the Armenian Language (Comparative-typological Variativity), Yerevan, NAS RA Publ., 2014, էջ 106-111:

համար, ապա հայ. *տաղ* բառը կարող է առնչվել *դայլ* (< *դայլայլ* < \**դայլ-դայլ*. «թռչնի մի տեսակի երգեցիկ ձայն. ճովողուն, այդ թռչնի նպատակադիր կանչ») առանձին չգործածվող արմատի հետ՝ նույնպիսի *այ/ա* տարբերակամբ:

Այնուհետև, այս դեպքում *դայլ* // *տաղ* արմատները՝ իբրև ձևախմաստային տարբերակներ, ունեն ընդհանուր «ձայն, հնչուն» ենթիմաստը՝ բաշխված բնական («ձայն») և մշակութային («մեղեդի, խոսք») նշանակման վրա: Ընդ որում արտահայտության պլանում (բառի նշանակման մեջ) առկա է ոչ միայն *այ > ա*, այլև *դ > տ*, *լ > ղ* հերթագայություն (ալտերնացիա), որ հայերենի հնչյունաբանական օրենքներով լիովին բացատրելի է: Իսկ արմատի ծագմանն անդրադառնալու ենք հետագայում՝ առանձին, իբրև բնիկ (հնդեվրոպական՝ ոչ բնաձայնական) արմատ:

Այսպիսով, Նարեկացու երկերից միայն մեկի լեզվի քննությունը ցույց է տալիս, թե ինչպիսի բառային և քերականական իրողություններ են պարփակված հայ միջնադարյան գրական հուշարձաններում: Դրանց նոր, ավելի առարկայական (օբյեկտիվ) ուսումնասիրությունը երևան է բերում ժամանակի մտածողության հիմքով ձևեր, իմաստային տարբերություններ, շարահյուսական աշխարհիկ (ոչ գրաբարյան) կառույցներ և, որ ավելի հարկավոր է, բառերի ծագման մանրամասներ, որոնք էական են հայերենի պատմության համար:



Վազգեն Ամբարձումյան

ТОЛКОВАНИЕ НЕСКОЛЬКИХ СЛОВ ИЗ СОЧИНЕНИЯ  
ГРИГОРА НАРЕКАЦИ «ПЕСНЬ НА ВОСКРЕСЕНИЕ ХРИСТОВО»

Резюме

**Ключевые слова:** *Нарекаци, стихотворение, гандз, этимология*

Поэтическое сочинение Св. Григора Нарекаци – наилучший образец древнеармянского литературного языка X в., содержащий не только письменно-канонические, но и разговорно-диалектные слова, словоформы и выражения языка того времени. С этой точки зрения нами проведен фонологический и лексико-семантический анализ нескольких слов, которые встречаются в сочинении «Песнь на Воскресение Христово».

В частности, нами выделяются следующие особенности и отклонения от литературной нормы;

1. фонетические изменения, т. е. слияние гласных фонем, употребление глухих согласных вместо звонких (*q* [g] > *ly* [k], *ջ* [j] > *ճ* [č], *ղ* [d] > *ւ* [t]): *ի լեռնւտ(ւ)* [i leɾnē(n)] (вм. *ի լեառնւտ* [i leaɾnē(n)]) «с горы», *կորնկան* [kornkan] (вм. *կորնգան*) [korngan] «эспарцет». *Ճոճ* [č o č] (вм. *ջոջ* [j o j]) «крупный, большой», \**դայլ* [dayl] «голос (птичий)» (ср. *դայլայլ* [daylayl] «трель, дробь») (> *ւայլ* [tağ] «песня, песнь» (?) и т. д.;
2. новые слова (незафиксированные в «Новом словаре армянского языка» [1-2, Венеция, 1836-1837]: *լայնաթիկունք* [laynat'ikunk'] «широкоплечий; плечистый», *խրճազեալ* [xɾjadizeal] (< *խրճազեմ* [xɾjadizem]) «наваливать сноп», *ճաղկախախոնք* [sağkaxayut'sk'] «букет, собранный из разных цветов»;
3. слова из народно-разговорного варианта языка: *եզնամոլ* [eznamol] «первая пара волов», *խարտիշագեղ* [xartišageğ] «рыжекрасивый», *խոլրճան* [xolɾjan] (< *խոլրճան* [xolorjn]) «орхидея», *կորնկան* [kornkan] «эспарцет», *կանչիւն* [kančiwɛn] (< *գոչիւն* [gočiwɛn]) «зов, крик; вскрик», *ուիամիյակ* [uɾamijak] «стан наподобие ивы» и т. д.;
4. применение существительного множественного числа с частицей *-եր* (-er), что было характерно для новоармянского литературного языка: *փոկեր(ւ)* [p'oker(n)] «ремни»;
5. новое толкование (этимология) слов *գանձ* [ganj] «сокровище; гимн», *գիլ* [gil] «круглый», *ւայլ* [tağ] «песнь; стихотворение» и т. д.

Кроме того, нами выделены и другие отклонения от норм литературного языка на уровне лексической семантики, синтаксиса и народно-разговорной стилистики.

AN INTERPRETATION OF SOME SPECIFIC WORDS  
FROM “ODE FOR THE HOLY RESURRECTION” LITERARY WORK  
BY GREGORY OF NAREK (GRIGOR NAREKATSI)

Summary

**Key words:** *Narekatsi, canto, gandz, etymology*

The poetic composition of St. Grigor Narekatsi is the best example of the ancient Armenian literary language of the 10<sup>th</sup> century, containing not only written-canonical, but also colloquially-dialect words, word forms and expressions of the language of that time. From this point of view, we conduct a phonological, lexical and semantic analysis of several words of “Ode for the Holy Resurrection”.

In particular, there are the following features and deviations from the literary norm:

1. Phonetic changes, ie, the merger of the vowel phoneme, deaf consonants instead of voiced (*q* [g] > *կ* [k], *ջ* [j] > *ճ* [č], *դ* [d] > *տ* [t]): *ի լեռնէ(ն)* [i leṛnē(n)] (instead *ի լեւոնէ(ն)* [i leaṛnē(n)]) “from the mountain”, *կորնկան* [kornkan] (instead *կորնգան* [korngan] “melilot”. *ճոճ* [č o č] (instead *ջոջ* [joj]) “large, big”, \**դայլ* [dayl] “trill; chip (of bird)” (comp. *դայլայլ* [daylayl] “trill; chirping”) (> *տաղ* [tağ] “song; tune, ode, melody”, etc.,
2. New words (i.e. unfixed in the “New Dictionary of the Armenian Language” [1-2, Venice, 1836-1837]: *լայնաթիկունք* [laynat‘ikunk‘] “broad-shouldred”), *խրձաղիզեալ* [xradizeal] (< *խրձաղիզեւ* [xradizem]) “bind sheaves”, *ծաղկախալսուցք* [cağkaxaytuc‘k] “decorate with other flowers”,
3. Words of the spoken variant of language: *եզնամոլ* [eznamol], *խարտիշագեղ* [xartišageğ] “light-brown”, *խոլրձան* [xolrjan] (<*խոլրձան* [xolorjn]) “orchid”, *կորնկան* [kornkan] «sainfoin», *կանչիւն* [kančiwñ] (< *գոչիւն* [gočiwñ]) “call, scream”, *ուրամիջակ* [uṛamijak] “stan that willow”, etc.,
4. The use of the plural noun with the particle -եր (-er), characteristic of the New Armenian literary language: *փոկեր(ն)* [p‘oker(n)] “belts”,
5. A new interpretation (etymology) of words *գանձ* [ganj] “treasure”, *գիլ* [gil] “gil”, *տաղ* [tağ] “ode”, etc.

In addition, we have highlighted deviations from the norms of the literary language at the level of the semasiology of words, syntax and stylistics of the folk-speaking variant, which are analyzed in particular in the article.

The experience of analyzing the vocabulary of the mentioned work is important for a new study of the history of the Armenian language as a whole.